ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2021թ. հունիսի 07-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-21/9-Պ պայմանագրին լրացում կատարելու մասին

Ք. Երևան 19 հուլիսի 2021թ.

«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Դավիթ Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մյուս կողմից,

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի և 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2021թ. հունիսի 07-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-21/9-Պ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.9 կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը հանձայնեցին.

1. Կատարողը պարտավորվում է Գնորդին լրացուցիչ թվով 1 (մեկ) հատ էլեկտրական կողպեք (այսուհետ նաև՝ Ապրանք), ինչպես նաև իրականացնել Ապրանքի տեղադրումը Պատվիրատուի կողմից մատնանշված անհրաժեշտ վայրում, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա դիմաց սույն Համաձայնագրով նախատեսված չափով:
2. Սույն Համաձայնագրով նախատեսված Ապրանքի գինը կազմում է 28 800 (քսանութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: Սույն Համաձայնագրի ընդհանուր արժեքը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից իրականացվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, ակնկալվող շահույթը և այլն:
3. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:
4. Սույն Համաձայնագրով նախատեսված Ապրանքը Վաճառողի կողմից մատակարարվում են Գնորդին մինչև 2021 թվականի հուլիսի 30-ը ներառյալ:
5. Պայմանագրի ցանկացած դրույթ կիրառելի է սույն Համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:
6. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
7. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց պող. 26
201 սենյակ
ՀՎՀՀ՝ 02708088
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022369951001

Դավիթ Գրիգորյան
Տնօրեն

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26,
Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն